ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 6 հոկտեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գառնիկ Կարապետյանի
անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գառնիկ Կարապետյանը 16.09.2011թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 6^1, 2^1, 414^1, 414^2 հոդվածի առաջին մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18, 14, 14.1, 19, 27, 27.1, 32 հոդվածների պահանջներին հակասող եւ անվավեր»:

Դիմումին կցված դատական ակտերի եւ դիմողի փաստարկների ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը հիմնավորող որեւէ փաստարկ չի ներկայացրել, որեւէ կերպ չի հիմնավորել վիճարկվող դրույթների հակասահմանադրականությունը, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ կետի հրամայական պահանջն է: Բացի դրանից, նշված դրույթի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշման համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն

ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Քաղաքացի Գ. Կարապետյանի դիմումի ուսումնասիրությունից պարզվում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթների ենթադրյալ հակասահմանադրակա-նության որեւէ հիմնավորում:

Հարկ է նշել նաեւ, որ դիմողը պատշաճ կերպով չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրա-վունքն է խախտվել, ինչպես նաեւ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դա-տարանի ՍԴՈ-839 որոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 6-րդ կետով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատա-րանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գառնիկ Կարապետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴԴԿՈ/1-24